75. ՅՈԹ ԴԵՎԵՐՈՒ ԱԽՊԵՐ

Կէղնի ու չէղնի մարթ մի, կնիկ մի կէղնի, մարթն ու կնիկ կը-կովընտին։

Կնիկ կասա.—Մա՛րթ, մացեր ես էստեղ, ընձի պանի պետք չիքաս, մենք էմլա խեղճ մացեր ենք, յան կէրթաս պանիս, յան էր ա չէ, թո՛ր կնա իմ տնեն։

Մարթն ասաց.—Կնի՛կ, էրկու խավկիթ տուր ընձի, ես կէրթամ, դու էղնիս քու ասված։

Մարթն է, կէրթա ճաղցի մի ռաստ կուկա, կմտնի ճաղաց, քիչ մի ալուր կառնի ճաղցեն, կլցա ջեր ու կէրթա։ Շատ կէրթա, քիչ կէրթա՝ սարի մի ռաստ կուգա, կէրթա սարի մեջ կպտոտվի, կտեսնի օր տեղ մի կրակ կերևա, տեմ կէրթա կրակի մոտ։ Կէրթա իշկի թե յոթ դև նստած ա կրակի կուշտ, ճոչ պղինձ մի դրուկ ա՝ տակ կվառի, փլավ կէփեն ուրանց խամար։

Կէրթա կրակի մոտ ա, կայլոն կլցա, ծեռ կմտուցա կրակի մեջ, կրակ կխանա, կտնա կայլոնի վերեն ու կքաշա։ Դևերն օր կը-տեսնին, կշիվարին, իրարու կասեն.

— Ախպըրտիք, էս ի՞նչ զոռ մարթ էկավ ըստեղ, օր մեզնե չվախեցավ, էկավ մեր պղնձի տկեն կրակ խանեց՝ կուտա[1]։

Խայն ասաց.— Հ՝ելա կանա, յոթ դև կփառչիմ[2] ծառ, ի՞նչ ա կիշկեք իրարու, կփսփստաք։

---

1 Կուտի (Ծ. Բ.)։

2 Կտոր-կտոր անելով՝ փակցնել (Ծ. Կ.)։

Դևերն ասին.—Ախպե՛ր ջան, մենք ղաթի քեզի պես մարթ մի կփտռինք, տու մեզի ճոչ ախպեր, մենք քըզի պստիկ ախպեր։

Պղնձի զատ կէփի, կնստին մեկտեղ զատ կուտին։ Մեկ դև կվերցա, կասա.—Ախպըրտիք, մեզի փետ չկա, մենք պիտի էրթանք փետ պերենք։

Էտ խայն կասա.— Հ'որի՞ն եք կաներ եք ապա, հ'ե՛լեք էրթանք։

Կվերցեն զնչիլ մի յոթ դև, խայն էլ ա կէցկեն ուրանց հ'առեճ ու կէրթա՞ն։ Խայ չկընար ինոնց խետ էրթար, կկանչա դևեցներուն.—Ախպրտի՛ք, տուք ճոչ ու պստիկ չկիտեք, ե՞ս հ'առեճ պիտի ընկնիմ, թե՞ տուք։

Դևեր կասեն.—Տո՛ւ պիտի հ'առեճ ընկնիս։

Խայն հ'առեճ կընկնի կէրթան։ Էրթալիքան դևերն օր նաֆաս կխանեն՝ դևերու նաֆասից խայ ճամբախ կթոնի, կէրթան կխասնին սար։

Խայ կասա դևեցներուն.—Ախպըրտի՛ք, էսօր ես կշալկեմ փետ, կտանիմ։

Կասեն.—Աղե՛կ։

Խայ կասա.—Դե պերեք էտ զնչիլ, թալեք էսա սարի պոլոր, տվեք սարն իմ շալակ, շալկիմ տանիմ տուն, հ'որի՞ն հըմկախ կանք սար։

Յոթ դևն էլ կանին կասեն.—Չէ՛, ախպեր, էտըմլա պան չէղնիր, տու ճոչ ախպեր, մընք պստիկ ախպեր, տու շալակ շալկես՝ մենք մնա՞նք։

Մարթն ասաց.— Հ'ելա կանա յոթ տիր ծե կփառչիմ ծառ, տուք սարն հ'որի՞ն չիտաք իմ շալակ։

Դևերն ասին.— Ախպեր ջան, սար խոշ մեր մնակ չէ, խեղճ մարթ էլա կա, օր կուդան փետ տանին, տուն օր սար շալկես՝ խեղճ մարթիկ էլ չեն կանա կան տանին։

Ասաց.—Դե էկեք տո՛ւք շալկեք։

Դևեր կուդան, ուրանց կարողութան չափ փետ կկտրեն ու կըշալկին, խայ տառտակ կէցկեն հ'առեճ, կուդան։ Կուդան խասնին տուն։

Խայ կասա.— Ամո՛թ ծի, ես հաղ մելա ծեր խետ փետի չըմ հ'իկար. էսա փշուր շալկիք պերիք, ես ի՞նչ էնիմ։

Իրրկուն է, զատի վախտ ա, վառեն օր զատ իփեն, խայ կասա.—Ախպըրտիք, տուք յոթ խոկի, ես մեկ խոկի, դուք իմ խետ չի՞ կաք իմ խետ դյուլաշ կպինք, իրարու ուժ փորձինք։

Դևերն ասին.— Ախպեր, ի՞նչ կուզես, քու խոսքն ա։

Մարթն ասաց.—Ալա կանիր, ես ծեզի թարշըբա էնիմ։ Թավաքալի ծեզի չպռնին ծեռներուս մեշ ճխճորիք։ Ախպըրտիք, արեք քար ճխթենք, ճուր խանենք քարից։

Ցոթ դև իրար իշկեցին՝ վախեցան, քարից իմա՞լ ճուր կէղնի։

Խայն ասաց.—Մարմար քար կա՞ էստեղ։

Ասեցին.—Կա՛։

Խայն ասաց.—Պե՛ր։

Քար պերեցին տրվեցին խայոն։ Խայն առավ քար, ասաց.—Ախպըրտիք, իշկեք էսա քար, ես քարից ճուր կխանիմ։—Քար թալեց չեր, հավկիթ շերեն խանեց, ասաց՝ «Ցա՛ Սուրբ Սուլուլիկ». ու ղհավկիթ ճխթեց, ասաց.— Ախպըրտիք, իշկեք, տեսեք էմլա ճուր։

Դևեր մեկ-մեկի իրես իշկեցին՝ վախեցան։

Մարթն ասաց.—Դե՛, ախպըրտիք, դուք էլա պիրեք քար ճըխթեք՝ ճուր խանեցեք։

Դևեք քար կառնին ուրանց ծեռ, կճխթեն, քար կմանտրի, ճուր չելնիր։

Մարթն ասաց.— Ախպըրտիք, էկեք ոըհաթ պան մի կըսիմ, բալքի էնեք։

Դևն ասաց.—Ախպեր, ի՞նչ ա։

Մարթն ասաց.—Մանտր սըվտակ քար առնինք մեր ծեռք, փըշրենք՝ տանք քամին տանի։

Դևեքն ասացին.—Ախպե՛ր, դե էրա տեսնենք՝ էմա՞լ ա։

Մարթն ասաց.—Քար պերեք։

Քար պերեցին տվին մարթու ծեռ։ Մարթ քար առավ թալեց չեր, ալուր խանեց առավ ծեռ, փշրեց ու տվեց քամին տարավ։

Ասաց.— Դե՛, ախպըրտիք, տուք էլա էրեք։

Դևեքն առան քարերն ուրանց ծեռք ճըխթեցին, ճըխմըռթեցին՝ քամին չտարավ։

Սորա դևեր տյուշյումիշ էղան, ասին՝ «Ախպըրտիք, էկեք մենք պանմ՝ էնենք, էսա կրակ ուտող խոզածին պիտի զմըղի ուտա»։

Մեկել ախպեր խառցուց.—Ապա ի՞նչ էնինք։

Ասաց.— Ի՞նչ պիտի էնինք, կելնինք կպաժվինք։

Կանչեցին.— Մա՛րթ։

Մարթն ասաց.—Ի՞նչ է, ախպըրտիք։

Դևերն ասին.—Արի պաժվինք։

Մարթն ասաց.—Պաժվի՞նք, պաժվի՞նք... Բեմունաթ շանորդիք, ծեզի ի՞նչ կա ըստա։ Խեղճ կուդաք զի, օր չի տամ՝ չեմ իտար։

Դևերն ասին.—Ախպե՛ր, տու կիտես, իմալ օր կուզես՝ իմալ լե

թըղ էղնի, ես անասվածութեն չեմ ընիր, էրկու փայն ընծի, փայ մը ձըզի։

Դևեր իրարու իրես ըշկեցին, իրարու ասեցին՝ «Ախպեր. էսա մարթուց մենք փըրծինք, ի՞նչ կուզա՝ տանք»։

Կացին մարթու մոտ ասին. «Արի էրթանք մուղազեն»։

Կացին մուղազեն, փարեն կիսեցին, էրկու թալիս[1] օսկի ընկավ խայու պաժին։

Խայն ասաց.—Շան օրդիք, ամոթ չէ զի. էս էրկու տասթմալ օսկին առնիմ իմ ծեռ, էրթամ իմ էրկի՞ր։

Դևերն ասին. «Ախպեր, իմալ կուզես՝ էմալ էնինք, մեկտեղ առնինք էրթանք»։ Մեկ դևեն շալկեց, խայն ընկավ հ՝առեճ, կացին։ Դևեն օր նաֆաս կխաներ՝ խայն ըս դեհեն ընտեղ կթոներ։ Ըտ հըմլա հալով, չուր խայու տուն կնացին։

Դևեն օր պեռը քետին տրեց, նաֆաս օր խանեց, խայ թռավ կպավ առիք։

Դևեն խառցուց ասաց.—Ախպեր ջան, հ՝օրի՞ն հ՝ելար էտտեղ։

Մարթն ասաց.—Հ՝ելա օր էսա կերան քակիմ՝ զարկիմ քու ոռ։

Դևեն հ՝ելավ թողեց ու փախավ։ Մարթն ասաց.— Կնի՛կ, իմա՞լ ա, տու զիս կծեծիր։ Ես էլ էսա փարից օր քըզի չիտամ՝ իմա՞լ կընես։

Կնիկն ասաց.—Քա մարթ, ինչի տուն անասվա՞ծ ես։

— Կնի՛կ, էմ լե խեղճ ես,—ասաց,—քըզի կուտամ փարա, մեկ տեղ ապրինք ու մեռնինք։

Էրկնուց իրեք խնձոր իճավ, մեկ՝ ասող բաղիշեցի Մուրատին, մեկ վանեցի գրողին, մեկ լե ականշ արող շաղամաթին։

---

1 Շատ անգամ ալ քաթանշա կըսեն։ Քաթանշա կամ թալիս՝ մեշոկ կնշանակե (Ս. Բ.)։